Եւ զկնի Հարցուփորձի,
Ցուցին զԹուղԹ բօլիցայի.
Նաեւ զգիր վարդապետի,
Վասն գրեանցն՝ զոր ես բարձի,
Զի ի ձեռս նոցա Հասանիցի,
Ցացեն զվերայ եղեալ գամպի.
Վասն այն ի տուն նորա իջի,
Որպէս զգառն՝ գայլամիջի,
Խօսից նորա Հաւատացի,
Բարեպաշտօն զնա կարծեցի.
Զկնի սուղ ինչ՝ ժամանակի,
Միւս ընկերքն վարդապետի,
Գան ժողովին ի մի տեղի,
Ըզպա գլուխ կարգեն բանի.
Հընազանդեալք՝ Հրամանի,
Առնս այսմիկ յամենայնի,
Ասեն որ ինչ՝ սովաւ լինի,
Մեզ երկոցունցս՝ է Հաճելի.
Ընդ Հաստատել նոր այս ուխտի,
Կոչեն եւ զիս ի յայն տեղի,
Ասեն ընդ մեզ միաբանիր,
Զի առնեմք զբան յոյժ պիտանի,
Զխորհուրդս զայս դնեն ի միջի,
Զի գործք իւրեանց աւարտիցի,
Ընկերութեանց գիրն լուծցի.
Որ ընդ ոսկան վարդապետի.
Ընդ որս եւ ես վասն այսմ իրի,
Խորհրդոյս այսմ եղէ տեղի.
Զի զգրամն իւրեանց՝ ըԼ'ւանԹերի,
Զոր տուեալն էին ապարանի.
Առցեն չաՀիւքն որքան լինի,
Ըստ օրինի նոյնոյ երկրի,
Հաստուցանել որ ինչ պարտի,
Ըստ յաջողման ժամանակի.
Վասն այն եւ ես զայս յանձն առի,
Ըստ Հաճութեան նոցայն սրտի,
Նստեալ զմուրՀակըն գըրեցի.
Որ անուանի լէԹրագամպի [1],
Իմով մօՀրաւս մօՀրեցի,
Պետրօ աւագին յանձնեցի,
Զպարտն երկուս բաժանեցի,
Զի վճարումն դիւրաւ լիցի.
Ըզմասն ինչ տալ՝ պատրաստեցի,
Ուխտադրութեամբ Հաստատեցի,
Մնացորդին նոյնոյ դրամի,
ԶլէԹրագամպին զայն արարի.
Ըստ առաջնոյն մեր պայմանի,
Ցամբստրդամ յուղարկեցի,
Զի այն եւս անդ՝ վըճարիցի,
Եւ բերեալ ինչն իմ յիս դարձցի.
Եւ ի վերայ այսմ անցուածի,
Միամտեալ Հաւատացի,

Օր մի ելեալ ընդ իւր գնացի,
Ի նաւաբանին բառնալ ընչի.
Եւ ի դառնալն առ նա Հարցի,
Ասաց զինչս քոյս ի նաւ բարձի,
Քեզ յայտնեցանէ փոյԹ մի լիցի,
Զի զամենայն ինչ Հոգացի.
Ոչ գիտելով զոխան գաղտնի,
Զոր ունէր նա ի Թագստի,
Զի զիս Հանցէ յընչից անտի,
Եւ արասցէ ողորմելի.
Վասն գրեանցն բարձեալ նաւի.

Գաղտ չինէ զգիր բօլիցայի,
Եդեալ վերայ զայլ իմն գամպի,
Տայ ի ձեռս իւր ծառայի.
Խորհեալ զՀնար բազմադիմի,
Ուսուցանէ այնմ ծառայի,
Եւ առաքէ գաղտագողի,
Ի ըստամպօլ սակս վաճառի.
Իբրեւ ի քնոյ զարԹ բացի,
Մտաց նորա վերաՀասի,
Գտի զիս պատրեալ ափսոսացի,
Ուստեք է ճար՝ ոչ իմացի.
Առ դատաւորս բողոք բարձի,
Որպէս պատրեալ զիս ասացի,
ԶգողուԹիւն նորին ցուցի,
Բազմօք վկայիւք Հաստատեցի,
Յորժամ ի դատ ընդ նա մտի,
Զերկուս ընկերսն եւս անդ գտի,
Ինքն միջոյ Թուոց երրորդի,
Ոխս բազում պաՀեալ մտի.
Արքս այսորիկ ի մէջ կացին,
Բազում զիս ինձ Հասուցին,
Զինչս իմ առեալ զիս լացուցին,
Եւ յետ անտի ի բանտ արկին.
Յաւուրս մայիսի քսան եւ վեցին,
Յորժամ զիս ի միջոյ բարձին.
Տարեալ տեղի յիմն մուծին,
Յոյժ խաւարի աղջամղջին.
Պատեալ զինեւ սուգ լալագին,
Խիստ տառապանք եւ աՀագին,
Նեղեալ անձամբս սաստկագին,
Դառն եւ դժուար եւ վշտագին.
Յորժամ լինէր մէջօրէի,
Սաստիկ տօԹոյն յոյժ նեղէի,
Իբրեւ արիւն քրտունս Հեղէի,
Ի մէջ մարդկան ցեղուցեղի.
Ոմն տեսեալ զվիշտս տագնապի,
Ազդ արարեալ դատաւորի,
Հանել զմեզ յայլ ինչ տեղի,
Սակաւ Հանգիստ եւ դիւրալի.
Յորժամ ի յայն ես իսկ ելի,
Յոյժ արտասուս ես անդ Հեղի,
Զի տանջանաց էր այն տեղի,
ՊաՀուստ մարդկան արեանՀեղի.
Երբեմն երբեմն ի միտ գայի,
Գտայ կապեցեալ որպէս գերի,
Թէ փրկուԹեան ճար ինչ Հնարի,
Բայց էր մարդկան անկարելի.
ԱՀարեկեալ զարՀուրէի,
ԱնմխիԹար նստեալ լայի
Խորոց սրտէ Հառաչէի,
Զօրն բոլոր տագնապէի.
Ի Հասանել ժամ գիշերի,
Ի մէջ մաՀճի չդադարէի,
Բացեալ աչօք միչև միայի,
Մինչ ի ծագել արուսեկի.
Առաւօտէ մինչ երեկի,
Երկոտասան ժամ ցերեկի,
Բազմիցս խորՀեալ ի միտ եկի,
Զմեզս անձին իմոյ գտի.
Զի ոչ լուայ բարեկամի,
Եւ ոչ խօսիւք նոցա գնացի,
Զարացս այս Հաւատացի,
Երեք արանցս զորս յիշեցի.

Այս երեքեանս յոյժ ատելի,
Եկեալ մի վայր նման դիւի,
Զառեալն յինէն զգիրն պարտի,
Տան ի մաստուրն [1] փէտրօվիլի [2].
Եղէ ես յոյժ ողորմելի,
Ի ձեռն նոյնոյ ժանտ մաստուրի,
Գող ինձ ներՀակ յամենայնի,
Համամբ վճռոյ տեառն վիքարի [3].
Վերս բազումս անտի տարի,
Ամիսս երկու չարչարելի,
Մինչ եղ Հրաման անկարելի,
Թող տալ զպարտս իւր Հնարի.
Առ նունցիոսն [4] բողոքեցի,
Վերատեսուչ տեառն փափի,
Զդատաստանն իմ յանձնեցի,
Նմա Հոգալ ըստ օրինի.
Յետ այսորիկ այլ եւս կացի,
Ամիսս երկու անճար միացի,
Եւ ի լնուլ չորից ամսի,
ԵՀաս Հրաման տեառն նունցի.
Ասէ Հանէք զդա ի բանտէ,
Տառապանացդ վտանկի,
Զի դա ումեք ոչինչ պարտի,
Առ նախանձու մատնեալ բանտի.
Նաեւ ասէ ծախս խարճի,
Որ է վատնեալ ի մէջ բանտի,
Տացէ մաստուրն որքան լինի,
Առնդ այդմիկ քաՀանայի.
Յայնժամ ելեալ ուրախալի,
Բանտէ անտի եւ կապանի,
Դարձի ի տուն ի նա կացի,
Ոչ յայտնապէս՝ այլ Թագստի.
Զի չէր եղեալ բանս աւարտի,
Տանօրեայ տալ պայմանի,
Եւ ելանելն իմ յըշտապի,
Մընալ ներքոյ այս պայմանի.

Եւ յորժամ ես բանտէ ելի,
Էր Թուականն Հայկազնի,
Հազար Հարիւր տասն եւ ուԹի [5],
Քսան երկու սեպտեմբերի,
Անտի յորժամ ի տուն դարձի.
Յաւուրս երկու ի նա կացի,
Տեսեալ յայնժամ զիս ոսոխի,
Յոյժ չարացեալ եօԹնպատկի.
ԵրԹ արարեալ վաղվաղակի,
Առ նունցիոսն վասն Հրամանի
Եւ ի նմանէ առեալ լինի.
Արկանել զիս կրկին բանտի.
Զպատճառէ ոչ Հաւանի,
Արարեալն տեառն նունցի,
Ասէ տեսցէ դատ մեր սրբի [6],
Որ է բազմեալ ի Հռօմ դաՀի.
ԵՀաս Համբաւս այս բօԹալի,
Ցականջս իմ յոյժ վշտալի,
Զի կայր ի միտս աՀն առաջի,
Զոր կրեցի չորից ամսի.
Զի մի դուցէ դարձեալ լիցի,
Գող չար յետին քան զառաջին,

[1] Իտ. Lettera di cambio, փոխանակագիր։

[1] Իտ. Mastro, տէր (տղա)։
[2] Յատուկ անուն։
[3] Լիվոռնոյ քաղքին եպիսկոպոսին փոխանորդը։
[4] Իտ. Nunzio, նուիրակ Քահանայապետի։
[5] Քրիստոսի Թուական 1669։
[6] Պէտք է հասկնալ՝ «ոտքն» կամ «ըլ-բոտն», միայն յանգին յարմարութեան համար այսպէս ըրած է, ինչպէս նաեւ ուրիշ տեղերնոյնպիսի տաղաչափական ազատութիւններ կու տայ իրեն քերթողն։